

Ն. ՍՐԲՈՒԹԻՒՆ ՊՕՂՈՍ Զ. ՊԱՊԻ ՇՆՈՐՀԱԽՈՐԱԳԻՐԸ՝ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԳԱՀԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՏԱՄՆԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ

Նորին Սրբութիւն Վազգէն Ա.,
Ծայրագոյն Կաթողիկոս Հայ Առաքելական Եկեղեցւոյ.

Զերդ Սրբութիւն,

Տասներորդ տարեդարձը Զեր ընտրութեան իբրեւ Կաթողիկոս Էջմիածնի յարգամեծար Աթոռին, բարեպատեհ առիթ կ'ընծայէ հանդիսութիւններու, որոնց պիտի մասնակցին ներկայացուցիչները բովանդակ Հայ մեծ Ընտանիքին:

Զենք ուզեր լուծեամբ անցընել այս տարեդարձը, առանց Զեզի առաքելու Մեր ջերմագին ոգոյնները եւ Մեր յաւագոյն բարեմաղթութիւնները: Կը բաղձամք մաեւ այս պարագայէն օգտուիլ կրկնելու համար Մեր հիացումը ի տես Հայ ժողովուրդի հաւատարմութեան եւ փարումին հանդէպ Քրիստոնէական Հաւատքին եւ ի լուր անոր դիցազնութեան եւ պատմութեան դժուարին պահերուն: Բազմաթիւ եղան այդ դժուարին պահերը, եւ բազմաթիւ՝ նահատակները, որոնք այժմ կը բարեխօսեն Աստուծոյ առջեւ, որպէսզի այդ հաւատարմութիւնը շարունակուի եւ խորանայ յընթացս մեր ներկայ աշխարհին նորանոր դժուարութիւններուն՝ որոնք մուսկ վտանգաւոր չեն:


Մենք մասնաւորապէս ուրախ ենք որ Հայ Կաթողիկէ Համայնքին ազնիւ ներկայացուցիչները կը մասնակցին այդ տօնելուն. վասնզի այս ներկայութիւնը նշան մըն է եղբայրական սիրալիր յարաբերութիւններուն, որոնք կը զարգանան նոյն Ընտանիքին զանազան անդամներուն միջեւ:

Զերդ Սրբութիւնը չի տարակուսիր թէ այս նոյն զգացումներով է որ Մենք կը գնահատենք ներկայութիւնը Հայ Եկեղեցւոյ դէտերուն վատիկանի ժողովին, եւ թէ Մենք եռանդագին կը բաղձամք որ իրագործուի փափաքը Մեր Տիրոջ Յիսուսի Քրիստոսի. «Զի եղիցին մի»:

Զեզի դարձեալ յայտնելով Մեր խորին գնահատմամբ եւ Մեր եղբայրական սէրը, կը վստահեցնենք Զերդ Սրբութիւնը թէ Զեզի միացած ենք աղօթքով, Տիրոջմէ հայեցելով իր առատածնոյն օրհնութիւնները Զեր Անձին, Զեր կղերին եւ Զեր հաւատացեալներուն վրայ:

ՊՕՂՈՍ Զ. ՊԱՊ

Վատիկան,
17 Հոկտ. 1965



Ապրիլեա: Զոհերու Յուշարձանը Սուրբ Էջմիածնի շրջափակին մէջ: